ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՎ/13/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՎԵՐԱՔՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԿԱՐԻՆԵ ՍՈՍԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» հուլիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Կարինե Սոսիկի Բաղդասարյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 26-ի N ՎԻՎ 25/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի հիմքով հարուցված 2022 թվականի մայիսի 26-ի N ԿՎ/13/2022 կարգապահական վարույթի նյութերը.

421

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, Հանձնաժողովի կողմից իրականացված դատավորների հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված խախտումները: Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Կարինե Բաղասարյանը 2021 թվականի հունիսի 1-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում՝ (այսուհետ՝ Հայտարարագիր)՝

1. «(Դ)Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «(Դ.1.)Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում որևէ տվյալ չի հայտարարագրել, մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս հետ համատեղ բնակվող չափահաս անձ (որդի) Հրանտ Անտոնյանին 2020 թվականի հունիսի 17-ից սեփականության իրավունքով պատկանում է «Կոկա Մինիոտտե» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը, իսկ համատեղ բնակվող չափահաս անձ (ամուսին) Միշա Անտոնյանին 1997 թվականի հուլիսի 24-ից պատկանում է «ԱՄԿ» ՍՊ ընկերության 80% բաժնեմասը:

Այսինքն Կարինե Բաղդասարյանի հայտարարագրում Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

2. «(Բ.1.) Անշարժ գույքը» բաժնում հայտարարագրել է անշարժ գույքի երեք միավոր՝

- *ՀՀ, Կոտայք, , հաշվառման համար՝ ,*

գույքի տեսակ՝ հողամաս, 06/12/2007, համատեղ սեփականություն,

412

- *ՀՀ, Գեղարքունիքի մարզ, հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ արտադրական նշանակության շինություն, 24/03/2004, համատեղ սեփականություն,*
- *ՀՀ, Գեղարքունիքի մարզ, հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ հողամաս, 22/05/2008, համատեղ սեփականություն:*

Մինչդեռ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Կարինե Բաղդասարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է թվով 9 միավոր հետևյալ անշարժ գույքերը՝

- *Կոտայքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ տնամերձ, 06/12/2007, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ բնակելի կառուցապատման հողամաս, 22/05/2008, սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ կաթսայատուն, 24/03/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Խոտհարք, 31/08/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, . հաշվառման համար՝ գույքի տեսակ՝ Խոտհարք, 31/08/2004, համատեղ սեփականություն:*

Այսինքն՝ Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

423

3. «(Բ.6.)Դրամական միջոցները» բաժնի (Բ.6.1.) «Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում անկանխիկ դրամական միջոցների մնացորդներ չի հայտարարագրել: Մինչդեռ ՓԲԸ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ Կարինե Սոսիկի Բաղդասարյանի անվամբ սպասարկվող բանկային հաշվի մնացորդը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,080,895.00 (մեկ միլիոն ութսուն հազար ութ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ գումար:

Այսինքն՝ Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

Հայտնաբերված առերևույթ իրավախախտումների վերաբերյալ 2022 թվականի մայիսի 26-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ26/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

Նշված առերևույթ խախտումների առնչությամբ 2022 թվականի մայիսի 26-ին Հանձնաժողովի որոշմամբ հարուցվել է թիվ N ՎԻՎ/25/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը, ինչպես նաև թիվ ԿՎ/13/2022 կարգապահական վարույթը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 31-ին, ինչի կապակցությամբ Կարինե Բաղդասարյանը պատշաճ ծանուցվել է:

Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 31-ին իրականացված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում Կարինե Բաղդասարյանի նկատմամբ կայացրել է սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000.00 ՀՀ դրամի չափով «Վարչական տույժ կիրառելու մասին» թիվ ՎԻՎ/25/22 որոշումը:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը

Կարինե Սոսիկի Բաղդասարյանը Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է, որ հայտնաբերված անհամապատասխանություններն իր կողմից թույլ տրված վրիպակների հետևանք են:

Անկանխիկ դրամական միջոցների չհայտարարագրման վերաբերյալ հայտնել է, որ իր կողմից ներկայացված քաղվածքով հաստատվում է փաստն առ այն, որ 31.12.2020 թվականի

429

դրությամբ իր բանկային հաշվի մնացորդը կազմել է 1,080,895.00 ՀՀ դրամ, որը հանդիսանում է իրեն վճարված աշխատավարձից գոյացած գումար, ինչն ինքը ներկայացրել է Հայտարարագրի «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում՝ որպես տարվա ընթացքում աշխատավարձի տեսքով ստացած եկամուտ:

Անդրադառնալով իր հետ համատեղ բնակվող չափահաս անձ՝ Միշա Անտոնյանին (ամուսնուն) 1997 թվականի հուլիսի 24-ից «ԱՄԿ» ՍՊ ընկերության 80% բաժնեմասը պատկանելու վերաբերյալ տվյալը, ինչպես նաև իր հետ համատեղ բնակվող չափահաս անձ՝ Հրանտ Անտոնյանին (որդուն) 17.06.2020 թվականից «Կոկա Մինիոտտե» ՍՊԸ-ի՝ 100% բաժնեմասը պատկանելու վերաբերյալ տվյալը Հայտարարագրում չներկայացնելուն, Կարինե Բաղդասարյանը իր գրավոր բացատրությամբ հայտնել է, որ նշված ընկերությունները ստեղծման օրվանից որևէ գործունեություն չեն ծավալել, և դրանով պայմանավորված՝ դրանց վերաբերյալ իր կողմից Հայտարարագրում տվյալներ չեն ներկայացվել: Նշվածով պայմանավորված՝ Կարինե Բաղդասարյանը հայցել է Հանձնաժողովի ներողամտությունը:

Հանձնաժողովի կողմից արձանագրված՝ թվով 9 միավոր ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքերի մասին տվյալները չներկայացնելու իրավախախտման կապակցությամբ Կարինե Բաղդասարյանի կողմից դիրքորոշում չի ներկայացվել:

3. Որոշումն ընդունելու իրավական և փաստական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.

3.1 ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Կարինե Սոսիկի Բաղդասարյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության

425

իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

3.3 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

3.4 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, հողին ամրակայված այլ գույքը, իսկ նույն հոդվածի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը:

3.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

3.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների

426

վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթում ***հաստատված է համարել***, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Կարինե Բաղդասարյանի կողմից անզգուշությամբ կատարվել են հետևյալ խախտումները.

1. «(Դ)Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «(Դ.1.)Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում որևէ տվյալ չի հայտարարագրել, մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս հետ համատեղ բնակվող չափահաս անձ (որդի) Հրանտ Անտոնյանին 2020 թվականի հունիսի 17-ից սեփականության իրավունքով պատկանում է «Կոկա Մինիոտտե» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը, իսկ համատեղ բնակվող չափահաս անձ

420

(ամուսին) Միշա Անտոնյանին 1997 թվականի հուլիսի 24-ից պատկանում է «ԱՄԿ» ՍՊ ընկերության 80% բաժնեմասը:

Այսինքն Կարինե Բաղդասարյանի հայտարարագրում Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

2. Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույքը» բաժնում հայտարարագրել է անշարժ գույքի երեք միավոր՝

- *ՀՀ, Կոտայք, հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ հողամաս, 06/12/2007, համատեղ սեփականություն,*
- *ՀՀ, Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ արտադրական նշանակության շինություն, 24/03/2004, համատեղ սեփականություն,*
- *ՀՀ, Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ հողամաս, 22/05/2008, համատեղ սեփականություն:*

Մինչդեռ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Կարինե Բաղդասարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է թվով 9 միավոր հետևյալ անշարժ գույքերը՝

- *Կոտայքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ տնամերձ, 06/12/2007, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ բնակելի կառուցապատման հողամաս, 22/05/2008, սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ կաթսայատուն, 24/03/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Խոտհարք, 31/08/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն,*

428

- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն,*
- *Գեղարքունիքի մարզ, . հաշվառման համար՝ գույքի տեսակ՝ Խոտհարք, 31/08/2004, համատեղ սեփականություն,* հետևաբար, Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

3. Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում Կարինե Սոսիկի Բաղդասարյանն անկանխիկ դրամական միջոցների մնացորդներ չի հայտարարագրել: Մինչդեռ ՓԲԸ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ Կարինե Սոսիկի Բաղդասարյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է եղել 1,080,895.00 (մեկ միլիոն ութսուն հազար ութ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ գումար հաշվի մնացորդ, հետևաբար, Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

Հաշվի առնելով արձանագրված խախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով հաստատված փաստերից հետևում է, որ Կարինե Բաղդասարյանը 2020 թվականի տարեկան հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ:

Նշված արարքներով, երբ Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները ոչ ամբողջական կամ սխալ են ներկայացվում Հայտարարագրում, հայտարարատու պաշտոնատար անձը թույլ է տալիս Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված խախտում:

Հանձնաժողովն իր կողմից կայացված մի շարք որոշումներում արձանագրել է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

429

Հանձնաժողովի կողմից կայացված մի շարք որոշումներում՝ արարքը որպես նվազ նշանակություն որակելիս էական են համարվել խախտման բնույթը (այն, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ), արարքի որակական կողմը, խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ, ինչպես նաև արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Նշվածի համատեքստում, և գործի հանգամանքները վերլուծելով իրենց ընդհանուր համակցության մեջ, արարքը նվազ նշանակություն որակելիս էական է համարվել այն հանգամանքը, երբ պաշտոնատար անձի չհայտարարագրած տվյալը չի գերազանցել նրա պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձը: Էական է գնահատվել նաև այն, որ հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտը ստացվել է մեկ աղբյուրից: Էական է համարվել նաև այն հանգամանքը,արդյո՞ք հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչների ավտոմատացված ստուգման համակարգում հայտարարատուի տվյալ տարվա հայտարարագիրը նույնականացվել է որպես ռիսկային, թե ոչ:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի ուժով (2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մաս) դատավորների հայտարարագրերն արդեն իսկ օրենսդրի կողմից սահմանվել են որպես վերլուծության առանձին և կարևոր սուբյեկտ, հետևաբար նաև հայտնվել են ռիսկայնության դաշտում:

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտել է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

430

Տվյալ պարագայում Կարինե Բաղդասարյանի կողմից ներկայացված Հայտարարագրում՝

1) «(Դ)Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «(Դ.1.)Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում որևէ տվյալ չի հայտարարագրել, մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս հետ համատեղ բնակվող չափահաս անձ (որդի) Հրանտ Անտոնյանին 2020 թվականի հունիսի 17-ից սեփականության իրավունքով պատկանում է «Կոկա Մինիոտտե» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը, իսկ համատեղ բնակվող չափահաս անձ (ամուսին) Միշա Անտոնյանին 1997 թվականի հուլիսի 24-ից պատկանում է «ԱՄԿ» ՍՊ ընկերության 80% բաժնեմասը:

Նշված արարքով Կարինե Բաղդասարյանը խախտել է Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

Սույն գործում առկա նյութերով առկա է փաստական տվյալ առ այն, որ Կարինե Բաղդասարյանի որդուն՝ Հրանտ Անանյանին պատկանող «Կոկա Մինիոտտե» ՍՊԸ-ն հանդիսանում է գործող կարգավիճակ ունեցող ընկերություն, թեև Կարինե Բադասարյանը իր կողմից ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է, որ նշված ընկերությունը ստեղծման օրվանից որևէ գործունեություն չի ծավալել:

Ավելին, նշված համատեքստում Հանձնաժողովը ուսումնասիրության առարկա է դարձրել հայտարարատու պաշտոնատար անձի Հայտարարագրի՝ «Շահերի հայտարարարագրում» չներկայացված տվյալները վերջինիս ընտանիքի անդամ՝ Հրանտ

431

Անտոնյանի հնարավոր՝ որպես գույք և (կամ) եկամուտ հայտարարագրված լինելու հետ կապված հարցը, արդյունքում պարզվել է, որ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ Հրանտ Անտոնյանը նույնպես չի հայտարարագրել որևէ տվյալ՝ կապված առևտրային կազմակերպությունում մասնակցություն ունենալու հետ, արդյունքում լիարժեք *չի ապահովվել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, ինչպես նաև չի ապահովվել հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորությունը:* Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ, Հանձնաժողովն արձանագրում է, որ խախտումը հանգեցրել *է շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորության բացակայությանը, հետևաբար խաթարել է նաև նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էությունը, ինչն իր հերթին հանգեցրել է դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:*

Ինչ վերաբերում է Կարինե Բաղդասարյանի ամուսնուն՝ Միշա Անտոնյանին 1997 թվականի հուլիսի 24-ից «ԱՄԿ» ՍՊ ընկերության 80% բաժնեմասը պատկանելու մասին տվյալը չներկայացնելուն, ապա, չնայած այն հանգամանքին, որ Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված՝ Կարինե Բաղդասարյանի հետ համատեղ բնակվող չափահաս անձ՝ Միշա Անտոնյանին (ամուսնուն) 1997 թվականի հուլիսի 24-ից «ԱՄԿ» ՍՊ ընկերության 80% բաժնեմասը պատկանելու վերաբերյալ տվյալին, գործի քննության արդյունքում ձեռք է բերվել փաստական տվյալ առ այն, նշված ընկերության կողմից փաստացի գործունեություն ծավալելու, շահույթ, եկամուտ ստանալու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ, հետևաբար Հանձնաժողովն արձանագրում է, որ այս առումով Կարինե Բաղդասարյանի ամուսնու՝ Միշա Անտոնյանի ԱՄԿ» ՍՊ ընկերությանում մասնակցության վերաբերյալ տվյալը Հայտարարագրում Օրենքի պահանջներին համապատասխան չներկայացնելը, *չի հանգեցրել դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:*

432

2) «Բ.1. Անշարժ գույքը» բաժնում հայտարարագրել է անշարժ գույքի երեք միավոր՝ ՀՀ, Կոտայք, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ հողամաս, 06/12/2007, համատեղ սեփականություն, ՀՀ, Գեղարքունիքի մարզ, հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ արտադրական նշանակության շինություն, 24/03/2004, համատեղ սեփականություն, ՀՀ, Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ հողամաս, 22/05/2008, համատեղ սեփականություն: Մինչդեռ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Կարինե Բաղդասարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում են թվով 9 միավոր անշարժ գույքեր հետևյալ հասցեներով՝ Կոտայքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ տնամերձ, 06/12/2007, համատեղ սեփականություն, Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ բնակելի կառուցապատման հողամաս, 22/05/2008, սեփականություն, Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ կաթսայատուն, 24/03/2004, համատեղ սեփականություն, Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Խոտհարք, 31/08/2004, համատեղ սեփականություն, Գեղարքունիքի մարզ, հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն, Գեղարքունիքի մարզ, հաշվառման համար՝ գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն, Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն, Գեղարքունիքի մարզ, , հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Վարելահող, 31/08/2004, համատեղ սեփականություն, Գեղարքունիքի մարզ, . հաշվառման համար՝ , գույքի տեսակ՝ Խոտհարք, 31/08/2004, համատեղ սեփականություն: Նշված արարքով Կարինե Բաղդասարյանը խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը,

433

հողին ամրակայված այլ գույքը, իսկ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը:

Ինչ վերաբերում է ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվությամբ Հանձնաժողովին ներկայացված թվով 9 անշարժ գույքերի վերաբերյալ Կարինե Բաղդասարյանի կողմից Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույքը» բաժնում ոչ ամբողջական ներկայացված տվյալներին, այս առումով Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման պահանջն է, որ Հայտարարագիրը պետք է ներառի հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող բոլոր անշարժ գույքերը, իսկ նույն հոդվածի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի դեպքում պարտադիր կերպով ներառվում են անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակի վերաբերյալ տվյալները: Մինչդեռ, տվյալ պարագայում Հանձնաժողովը հաստատված է համարել, որ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվությամբ Հանձնաժողովին ներկայացված թվով 9 անշարժ գույքերի վերաբերյալ նշված տվյալները ներկայացված չեն Կարինե Բաղդասարյանի Հայտարարագրում: Կարինե Բաղդասարյանը որևէ դիրքորոշում չի ներկայացրել տվյալ խախտման կապակցությամբ, հետևաբար հաշվի առնելով խախտման համար պատասխանատվություն սահմանելու համար էական համարվող վերոնշյալ հանգամանքները իրենց համակցության մեջ, Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ խախտման արդյունքում *չի արտացոլվել պաշտոնատար անձի իրական գույքային դրությունը, այս առումով հայտարարագրման ենթակա տվյալները չներկայացնելու արարքը հանգեցնում է նորմով պաշտպանվող*

իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:

3) «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում անկանխիկ դրամական միջոցների մնացորդներ չի հայտարարագրել: Մինչդեռ ՓԲԸ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ Կարինե Սոսիկի Բաղդասարյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է եղել 1,080,895.00 (մեկ միլիոն ութսուն հազար ութ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ գումար հաշվի մնացորդ: Նշված արարքով Կարինե Բաղդասարյանը խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

Ինչ վերաբերում է Կարինե Բաղդասարյանի կողմից իր անկանխիկ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ տվյալները Հայտարարագրում չներկայացնելուն, ապա վարույթի մասնակիցը ներկայացրել է բացատրություն առ այն, որ իր բանկային հաշվի մնացորդը կազմել է 1,080,895.00 ՀՀ դրամ, որը հանդիսացել է իրեն վճարված աշխատավարձից գոյացած գումար, ինչը վերջինս ներկայացրել է Հայտարարագրի «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում՝ որպես տարվա ընթացքում աշխատավարձի տեսքով ստացած եկամուտ: Որպես նշվածը հիմնավորող ապացույց՝ վարույթի մասնակիցը Հանձնաժողովին է ներկայացրել բանկային հաշվի 2022 թվականի մայիսի 25-ի քարտային հաշվի քաղվածք: Սակայն ինչպես վերջինիս կողմից ներկայացված քաղվածքով, այնպես էլ վարչական վարույթի նյութերում առկա՝ Կարինե Բաղդասարյանի անունով սպասարկվող այլ բանկերի քաղվածքներով չի հիմնավորվել այն փաստը, որ արձանագրված 1,080,895.00 ՀՀ դրամի եկամուտը կազմել է զուտ իրեն վճարված աշխատավարձից գոյացած գումար: Կարինե Բաղդասարյանի կողմից ներկայացված քաղվածում առկա չէ նշված ամբողջ գումարի՝ 1,080,895.00 ՀՀ դրամ

435

եկամտի ձևավորման աղբյուրի վերաբերյալ տվյալ, նշված քաղվածքով միայն հիմնավորվում է 447,529.00 ՀՀ դրամի չափով եկամտի վերաբերյալ աղբյուրի ծագման տվյալը:

Տվյալ պարագայում, արնդրադառնալով Կարինե Բաղդասարյանի կողմից իր անկանխիկ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ տվյաները Հայտարարագրում չներկայացնելուն, Հանձնաժողովն արձանագրել է, որ զրկված է նաև Օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասի՝ եկամտի հայտարարագրմանը ներկայացվող վավերապայմաններով սահմանված՝ Հայտարարատուի կողմից ներկայացված տվյալների հետ համադրության արդյունքում ոչ ամբողջական ներկայացված տվյալի արժանահավատության ստուգման հնարավորությունից, քանի որ 1,080,895.00 ՀՀ դրամից հիմնավորվել է միայն 447,529.00 ՀՀ դրամի չափով դրամական միջոցի ծագման աղբյուրը: Մինչդեռ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: *Այսինքն, չի ապահովվել պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը,վերջինիս իրական գույքային դրությունը, ինչն էլ հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը,ինչն իր հերթին հանգեցրել է դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:*

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:

Տվյալ պարագայում Կարինե Բաղդասարյանը Հայտարարագիրը չի ներկայացրել «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ, ինչը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև

436

Սահմանադրական օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված դատավորի վարքագծի կանոնի խախտում:

Սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները: **Վարքագծի կանոնները չպահպանելը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության**:

Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորին ***կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝*** դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ *դատավորի վարքագծի կանոնները խախտելը,* որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Սամանադրական օրենքի 147-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքում վարույթ հարուցած մարմինը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) կարգապահական վարույթը կարճելու մասին.

2)դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին:

Սահանադրական օրենքի 148-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության դեպքում վարույթ հարուցող մարմինը որոշում է կայացնում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդ միջնորդություն ներկայացնելու մասին:

Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***արարքը չի համարվում կարգապահական խախտում,*** *եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով* կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավական կարգավորումները՝ Հանձնաժողովը, կարգապահական վարույթներում էական է համարում անդրադառնալ գործի նյութերով

437

հաստատված խախտման որակական կողմին և գտնում է, որ այն պետք է գնահատման ենթարկել օրենքի ձևական և բովանդակային տեսանկյունից, որպեսզի պահպանվի *կիրառվող օրենքի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը:*

Այս առումով, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված՝ *դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականության ապահովման և պատասխանատվության համաչափության վերաբերյալ դրույթներին:* Այսպես, 2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվի առնելով դատական իշխանության անկախությունը և կոռուպցիայի դեմ պայքարում նրա որոշիչ դերը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան և առանց դատական մարմինների անկախությանը վնասելու, պետք է միջոցներ ձեռնարկի դատական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման ուղղությամբ և նրանց շրջանում կոռուպցիայի հնարավորությունները բացառելու համար: Այդպիսի միջոցները կարող են ներառել դատական մարմինների աշխատակիցների գործողություններին վերաբերող կանոնները:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի ուղեցույցի համաձայն՝ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը զարգացող միտում է և նպատակ ունի հասցեագրել շահերի բախման, յուրացման կամ ապօրինի հարստացման խնդիրները (տե՛ս ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի «Հոդված 11-ի կիրառական ուղեցույց և գնահատման շրջանակ», կետ 44[1]):

Գույքային դրության վերաբերյալ ամբողջական տվյալների ներկայացումը Վենետիկի հանձնաժողովի կողմից կոռուպցիայի կանխարգելման գործում դիտարկվել է որպես

[1]https://www.unodc.org/res/ji/import/programmes_projects_initiatives/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide.pdf

արժեքավոր զենք (տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) CDL-AD(2014)008, 24 մարտի, 2014 կարծիք No. 712 / 2013): Կարևորելով ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը՝ Վենետիկյան հանձնաժողովն անդրադարձել է նաև ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարման դեպքում ***պատասխանատվությանը և դրա համաչափությանը:*** Ըստ Վենետիկյան հանձնաժողովի՝ ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարումը պետք է առաջացնի այնպիսի պատասխանատվություն, որը կարող է ծառայել կոռուպցիան զսպելու նպատակին: Բացառություն կարող է կիրառվել *հայտարարագրում մանր և ոչ դիտավորյալ բացթողումներ ունենալու համար*, սակայն հայտարարագիր չներկայացնելը բավարար լուրջ խախտում է, և կարող է հանգեցնել պաշտոնից ազատման (Վենետիկյան հանձնաժողով CDL-AD(2015)042, 21 դեկտեմբերի, 2015 կարծիք No. 825/2015):

Վերոշարադրյալ փաստական և իրավական հիմքերն ու հիմնավորումները հաշվի առնելով՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հայտարարատու անձի կողմից Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա, մինչդեռ, հայտարարատու անձի կողմից չներկայացված տվյալներն հանգեցնում են պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողության ապահովման, խախտումների հայտնաբերման, հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորության բացակայության, ինչպես նաև չի արտացոլում պաշտոնատար անձի իրական գույքային դրությունը, այս առումով հայտարարագրման ենթակա տվյալները չներկայացնելու արարքը հանգեցնում է *նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը*, **հետևաբար նաև՝** ***դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:***

Մինչդեռ, բոլոր այն դեպքերում, երբ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա կոնկրետ տվյալները, որոնք հայտարարատուի կողմից չեն ներկայացվել իր հայտարարագրի (օրինակ՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում») կոնկրետ բաժնում *պահանջվող տվյալներում*, սակայն,

ներկայացված է եղել գույքի հայտարարագրի «*Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում* ընդգրկված (արժեթղթի տեսակի, ձեռք բերելու օրվա, ամսվա, տարվա, եղանակի, արժեքի (գնի), արժույթի, գործարքի մյուս կողմի անվանման, հասցեի վերաբերյալ) *տվյալներում, որոնք բովանդակային առումով ընդգրկել են օրենքով պահանջվող այլ բաժնում հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը*, Հանձնաժողովի կողմից դիտարկվել են որպես նվազ նշանակություն ունեցող արարքներ: Նման հանգամանքներում էական է այն, որ կոնկրետ գործերով արձանագրված դեպքերում հայտարարագրի այլ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվում է պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվում ինչպես հանրային հաշվետվողականությունը, անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը, այնպես էլ հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորությունը, հետևաբար նաև չի հանգեցնում *դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:*

Մինչդեռ, սույն գործով հաստատված փաստական հանգամանքներից պարզ է դառնում, որ ոչ ամբողջական ներկայացված հայտարարագրման ենթակա տվյալները ***բովանդակային առումով ներկայացված չեն հայտարարագրի այլ բաժիններում՝ Օրենքի այնպիսի պահանջների սահմաններում, որոնք բխում են նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունից***:

Մասնավորապես, սույն գործով պաշտոնատար անձի հայտարարագրում ներկայացված չէ պաշտոնատար անձի իրական գույքային դրությունը (Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ ենթաբաժնում և «Բ.1. Անշարժ գույքը» բաժնում Օրենքով պահանջվող տվյալները չհայտարարագրելու մասով), ինչպես նաև հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտմանն առնչվող տվյալները (Դ. «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում Օրենքով պահանջվող տվյալները չհայտարարագրելու մասով):

Հաշվի առնելով վերոնշյալ իրավանորմերի բովանդակությունը և հիմք ընդունելով վարույթում հաստատված հանգամանքները՝ Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ Կարինե Բաղդասարյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների խախտմամբ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր ներկայացնելը վերը նշված դեպքերում հանգեցրել է վարքագծի կանոնների՝ *նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային* խախտման, ինչը հանդիսանում է վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 148-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Միջնորդել Բարձրագույն դատական խորհրդին քննության առնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Կարինե Բաղդասարյանին՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելու՝ Հայտարարագրում ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Բարձրագույն դատական խորհուրդ, Կարինե Բաղդասարյանին, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով և ՀՀ արդարադատության նախարարին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

44